Հրանտ Մաթևոսյան

Արջը

Իսկ պատահե՞լ է, հարցրեց Ալանը, որ դուք մեն-մենակ արջի հանդիպեք:

Ինչպե՛ս չէ, պատասխանեց անտառահատը: Նա երկար նայում էր ինձ իր կանաչ աչքերով, հետո մենք աչքով արեցինք իրար և բաժանվեցինք: Մենք անտառի բնակիչներ ենք, իրար հետ կռվելու հարկ չունենք:

ՊԱՈՒՍՏՈՎՍԿԻ

Ձյունածածկ հարթավայրը

Իրիկունն արջը ձորից դուրս եկավ, իրեն տվեց ուրթի մեջտեղ: Շուն, կով, կաթ, կթվոր, ձի, խոճկոր իրար խառնեց ու՝ էլի ձորը՝ հետը տանելով դասատու Գևորգ Աբովյանի տատի էնիքը, ասելն ամոթ է, էն էլի՛ , որ տատերը հագնում են տակից: Այդտեղ, վրանի մոտ, հրացանը ձեռքին, կանգնած էր դասատուն: Իրար տեսան, կանգնեցին, իրար երեսի նայեցին, հետո արջն աչքով արեց, վարտիքը վերցրեց ու՝ ձորը: Հրացանը ձեռքին՝ դասատուն ընկել էր ու ծիծաղից գալարվում էր:

Կրակիր, ի՛նչ ես բերանդ բաց արել... Գնա՛, ետևից իջիր, բերանդ բաց ի՛նչ ես ծիծաղում...

Կոտո... հա՛-հա-հա-հա... կոտորակ է, կոտո-հա՛-հա-հա-հա...

Ձեռքը տվեցին կարաբին, տակը ձի քաշեցին. Գնա՛, իջի՛ր:

Նանի,էն որ լվացել էիր՝ ո՞ւր է...Որ լվացել էիր, էդտեղ Փոած էր... ծիծաղից խեղդվելով ասում էր նա, բայց կթվորուհիները բան չէին հասկանում:

Իջի՛ր, կհասցնե՛ս, գնա՛:

Ձին քշեց որ գնա՝ ձի՛ն էր քուռակ, փորքաշներն էին թուլ՝ ընկավ:

Վա՛յ ծաղրածու, ծաղրածու...

Վարտիքի մասին այստեղ սուտ էր. արջը վարտիք չէր տարել: Մնացածը ճիշտ

է: Արջը գիշերը խոզանոցները մտավ, մյուս օրը մոռուտում վախեցրեց աղջիկներին, հետո վերածևեց հովվի յափնջին ու շանը: Խոզերի ականջներից էր կսմթել, աղջիկներից մեկի դույլն էր իրեն պահել, պոկել էր շան ականջն ու պոչը: Գյուղում կարգին ծիծաղում էին: Հետո համը հանեց, մի տասը խոզ էր սպանել: Գյուղում վճռեցին, որ կսպանվի:

Ուրեմն Գևորգը՝ դասատուն, եկավ հին որսորդ՝ Գիրիշի մոտ, որ գնան սպանեն:

Ասում ես վնաս է տվել, հա՞... քմծիծաղը բեղի տակ՝ հարցրեց Գիրիշ քեռին:

Ասում են տվել է:

Եղա՛վ: Կսպանենք: Վնաս է տվել, շատ է տվել՝ կսպանենք: Ասում ես սպանե՛նք, հա՞:

Ասում են Գիրիշ քեռու հետ սպանեցեք:

Եղա՛վ: Ասել են սպանեցեք՝ կսպանենք: Խոսեցնում էր ու պղնձալարով հրացանի փողն ամրացնում խզակոթին: Ասում ես դու ուրթում էիր, որ ինքն եկավ, ինչու՞ չկրակեցիր:

Կոտորակ էր, արջի գնդակ չունեի:

Կոտորակ էր, արջի գնդակ չունեիր, հասկանալի է: Բա որ ձի նստեցիր, կարաբինն էլ ձեռքիդ էր, ինչո՞ւ չգնացիր:

Ձիուց ընկա:

Ձիուց ընկար... խոսում էր ու թաքուն ծիծաղում: Հավատում եմ, կոտորակ էր, կարաբինն ուշ բերին, ձին խամ էր, ձիուց ընկար՝ չսպանեցիր: Հավատում եմ, հավատում: Խոսում էր, հետն էլ կամաց-կամաց փաթաթում պղնձալարը: Փաթաթեց, փաթաթե՛ց, մինչև լարը վերջացավ:

Գնացինք:

Բա քեզ հրացա՞ն... էդ հրացանո՞վ:

Գիրիշ քեռին, ուրեմն, որսորդ է, որս է անում: Ամբողջ օրը հանդերում է լինում, պիտի որ շատ բաներ սպանելիս լինի և պիտի որ արգելված որս էլ որսալիս լինի, և գյուղխորհրդի նախագահ Նիկոլը իրիկունները գալիս է նրա տուն, կաքավի միս ուտում, նստում ու մնում: «Թվանքը բեր տուր իրեն» ասում է Գիրիշ քեռին կնոջը: Գյուղխորհրդի Նիկոլը, արգելված որսի համար, հրացանն առնում տանում է, մյուս իրիկուն նորից գալիս: Նորից կաքավ ուտում, նորից հրացան տանում: Այդպես, գրասենյակում մի տասը հրացան է հավաքվում: Դրանք բոլորը մի իսկական հրացան են: Մի իսկական հրացանը ցրված է այդ տասի մեջ ու դեռ մի տասի մեջ էլ կցրվի, մեկի փողն է իսկական, երկրորդի խզակոթը,

տասներորդի փակաղակը, և իսկական կլինի քսաներորդի նշահատիկը, մնացածը Գիրիշ քեռին ուրագով-բանով տաշում, սարքում է: Հա, որսորդի էն կիրքը որ նա ունի, թեկուզ էդ մի մասն էլ չլինի՝ էլի՛ կսարքի, մաս-մաս կսարքի ու լարով կկապի, էնքան որ՝ տանը միշտ կաքավ լինի: Կամ արջի միս: Կամ եզնիկի: Իսկ եթե ճիշտը կուզեք իմանալ, Նիկոլը ոչ մի անդամ էլ նրա տանը աղավնու միս չի կերել: Այդ՝ հավի է եղել: Կամ խոզի: Կամ մոզու: Եթե կուզեք իմանալ, նա ոչ մի որս էլ չի անում: Հանդերը մարդուն ուղղակի քաշում են, և ինքը, իր և ուրիշների համար, իմաստ է դնում դրա մեջ՝ ուսից հրացանի պես մի բան կախելով. «Որսորդ եմ, հանդերում որս եմ անում: Էս էլ հրացանս»:

Դրանով արջ սպանել կլինի՞, ասաց Գևորգը՝ դասատուն, էդ մահակով:

Քոնը կարաբին է, սպանում է. լավ հրացան է:

Որջի տեղը գիտեին, գնացին կանգնեցին գլխին:

Խելառը մեջն է, ասաց Գևորգը: Կարծես երեկ հար¬բած ու գժություններ արած ընկերոջ մասին էր խոսում:

Մեջն է՝ կսպանենք: Թող վնաս չտար, չսպանեինք... Ու ծերունին տնավարի, կարծես եղբոր տուն էր մտնում, ներս նայեց: Հը՛-հը՛... Կարելի՞ է, ու մտավ ներս: Արթնացավ, իրար երեսի նայեցին, ու արջը սուսուփուս դուրս եկավ: Ծերունին ճամփա տվեց, կողքից անցնելիս ականջին ասաց. «Մեղավոր ես, չէ՞»:

Գևորգը կրակեց բավական ուշ:

Արջի տան դռանը նստած ծիծաղեցին փախչող տանտիրոջ ետևից, թութուն փստացրին և հնարեցին հաշվետվությունը: «Կրակեցինք՝ չկպավ, դուք հո կրակոցը լսեցի՛ք»:

Հետո վնասներ արջն էլի էր տալիս, և Գիրիշ քեռին ու Գևորգը գնում կրակում էին, մինչև որ «Անշեղ դեպի սոցիալիզմ» թերթի՝ ինքնակամ թղթակիցն իմացավ, որ արջի որսն արգելված է և գրեց թերթին, թե արջի որսն արգելված է, իսկ Գիրիշ քեռին ու Գևորգ Աբովյանը կրակում են: Շրջկենտրոնից ի գիտություն հայտնեցին արգելքի մասին և ի միջի այլոց՝ տուգանքի չափը:

Ծիծաղը վերջացավ:

Արջը, ախար, էդ ո՞ր օրվա անվնաս անասունն է: Մենք կսպանենք, դուք տուգանեցեք, մի տեսնենք էդ ինչպե՞ս եք տուգանելու:

Շրջկենտրոնից ի գիտություն հայտնեցին, որ զգուշացումից հետո տուգանքը լինում է կրկնակի: «Զգուշացնո՛ւմ ենք»:

Վախեցան:

Իսկ արջը շարունակում էր վնաս տալ: Տնտեսությունից մի կով սպանեց: Հեռախոսով հանգիստ-հանգիստ հայտնեցին շրջկենտրոնին, որ մի կով է սպանել և առաջարկեցին մնալ հեռախոսի մոտ. «նոր զեկույցը չենք ուշացնի»: Եվ մյուս օրը ներկայացրին. «Ոչի՛նչ, մի երինջ՝ մի պոզը կոտրած, իսկի տոհմային էլ չէր,.,»: Շրջկենտրոնից առաջարկեցին սպանել. «Թույլատրվում է ա՛յդ արջին, լսու՞մ եք՝ ա՛յդ, սպանել և միսն ու մորթին ուղարկել շրջկենտրոն, որպես պետական սեփականություն»:
Արջը բնության զարդն է, ասացին հեռախոսի այս ծայրից, մենք բնության զարդ փչացնողը չենք:
Որսորդների բրիգադ եկավ: Որջին ետևից մոտեցավ օլիմպիական խազերի հաղթող Վասիկո Ղողոբերիձեն, ձախ կողմից՝ Անդրկովկասի քառակի չեմպիոն Հակոբ Մեղրունին, աջ կողմից՝ գրող-որսորդ Վախթանգ Անանյանը, դեմից, տաքսու վարորդ Կարապետ Հարությունյանն ու կուսակցության շրջանային կոմիտեի հրահանգիչ Վիլեն Խաչատրյանը: Մի կրակոցով փշուր-փշուր արեցին նրա անհասկացող գանգը, փորոտիքը թողեցին այստեղ, միսն ու մորթին տարան մայրաքաղաք:

Ծերունի Գիրիշը հիմա միայն մի հրացան ունի, իսկական: Հանդերը ձգում, տանում են ծերունուն, և, ուրիշների և իր համար իմաստ դնելով դրա մեջ, ծերունին ուսովն այդ հրացանն է զցում, իբր՝ արգելված որս եմ անում: Արջի, իհարկե, հանդիպում է: Հաճախ իրար չտեսնելու են դնում, երբեմն կանգնում, նայում են իրար: Ծերունին չի կրակում՝ որովհետև տուգանք կա, արջը չի հարձակվում՝ որովհետև հրացանն իսկական է: Այդքան: Իսկ աչքով անել՝ էլ չի պատահում, որ իրար աչքով անեն: